Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ի Ր №ՀՀ-ԱՆ-ԾՁԲ-ԲԸԱՀ-ԴՍՄԲԾ-1

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԱՆՎՃԱՐ ԵՎ ԱՐՏՈՆՅԱԼ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ «ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԳՈՎ ՍՏԱՑՎՈՂ ԴԵՂԵՐԻ ԵՎ ԴԵՂԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՍՏԱՑՄԱՆ, ՄԱՔՍԱԶԵՐԾՄԱՆ ԵՎ ԲԱՇԽՄԱՆ» ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԵՎ

«ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ
(բժշկական կազմակերպության անվանումը)

ՄԻՋԵՎ

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունը, որպես բժշկական օգնության և սպասարկման պետական պատվեր տեղադրող մարմին (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, ի դեմս Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարության աշխատակազմի ղեկավար Արմեն Կարապետյանը, որը գործում է Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրության հիման վրա և «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ն (այսուհետ՝ Կատարող), (լիցենզիա N_____, տրված ____ _____ _____թ.), ի դեմս տնօրեն Վարդան Դավեյանի, որը գործում է «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության հիման վրա, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

Ի.ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Պատվիրատուն հանձնարարում, իսկ Կատարողը պարտավորվում է իրականացնել «Մարդասիրական օգնության կարգով ստացվող դեղերի և դեղագործական արտադրանքի ստացում, մաքսազերծում և բաշխում» (այսուհետև՝ Ծառայություն) Պատվիրատուի կողմից թույլատրված տեսակների և սույն պայմանագրի հավելված 2-ում նշված պայմանագրային գումարի, հավելված 3-ում նշված ծառայությունների և գների, հավելված 1-ում նշված վճարման ժամանակացույցի համաձայն:

1.2. Իրականացված Ծառայության վերաբերյալ Կատարողը Պատվիրատուին սահմանված ժամկետներում ներկայացնում է հետևյալ հաշվետվությունները.

1.2.1. Յուրաքանչյուր ամսվա համար մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 5-րդ աշխատանքային օրը՝

ա. ՀՀ ֆինանսների նախարարի 06.08.2013թ. №673-Ն հրամանի №1 հավելվածով հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը,

բ.ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի ղեկավարի 04.10.2012թ N 2245-Ա հրամանով հաստատված «Պետական պատվեր իրականացնող բժշկական կազմակերպությունների կողմից վճարովի ծառայություններով և համավճարով կատարված աշխատանքների վերաբերյալ (ամսական)» տեղեկանքը,

գ. ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի ղեկավարի 25.10.2012թ №2426-Ա հրամանով հաստատված «Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների կողմից վճարված հարկերի, վճարների և աշխատողների թվաքանակի մասին» տեղեկանքը:

1.2.2. Յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա.մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 15-ը, իսկ տարեկան հաշվետվությունը՝ մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա փետրվարի 15-ը ՀՀ կառավարության 28.07.2011թ. №1058-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող առևտրային կազմակերպությունների ֆինանսատնտեսական հաշվետվությունը»՝ աճողական կարգով:

բ.Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2014 թվականի փետրվարի 20–ի №297–Ա հրամանով հաստատված Ծառայության ընդունման-հանձնման ակտը (եռամսյակային):

1.2.3. Յուրաքանչյուր ամսվա համար մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 15-ը՝ ՀՀ առողջապահության նախարարի 23.12.2014թ-ի №3072-Ա հրամանով հաստատված՝ Ծառայության համար դիմած քաղաքացիների հերթագրման վերաբերյալ հաշվետվությունը:

1.3. Կատարողի կողմից հաշվետու ժամանակաշրջանում իրականացված Ծառայության ընդհանուր ծավալից Պատվիրատուի կողմից ընդունված է համարվում Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2014 թվականի փետրվարի 20–ի №297–Ա հրամանով հաստատված Ծառայության ընդունման-հանձնման,

ակտի (եռամսյակային) և ՀՀ ֆինանսների նախարարի 06.08.2013թ. №673-Ն հրամանի №1 հավելվածով հաստատված հանձնման-ընդունման արձանագրության մեջ նշված ծավալը:

Սույն կետում նշված հանձնման-ընդունման ակտը և հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում են Պատվիրատուի կամ վերջինիս կողմից լիազորված անձի և Կատարողի կամ վերջինիս կողմից լիազորված անձի կողմից:

II. ՀԱՇՎԱՐԿՆԵՐԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

2.1. Ծառայության պայմանագրային ծավալները որոշվում են և ֆինանսավորումն իրականացվում է ՀՀ կառավարության 04.03.2004թ.-ի №318-Ն որոշմամբ հաստատված կարգի համաձայն:

2.2. Ծառայության վերաբերյալ հաշվետվությունները ներկայացվում են պայմանագրային ծավալների ամսական համամասնությամբ՝ աճողական:

2.3. Պայմանագրային ծավալների ամսական համամասնությունների գերակատարման հետևանքով հաշվետու ժամանակահատվածում չներկայացված հաշվետվությունները կարող են ներկայացվել փոխհատուցման պայմանագրային գումարի շրջանակներում՝ ՀՀ առողջապահության նախարարի կողմից սահմանված կարգով:

2.4. ՀՀ կառավարության կողմից հաստատված եռամսյակային համամասնությունների շրջանակներում ֆինանսավորումն իրականացվում է կանխավճարային սկզբունքով՝ ընդ որում հունվար և փետրվար ամիսներին կանխավճարը յուրաքանչյուր ամսվա համար սահմանվում է հաստատված տարեկան պայմանագրային գումարի եռամսյակային համամասնության մինչև 1/3-ի չափով, իսկ մարտ ամսից սկսված կանխավճարը սահմանվում է նախորդ ժամանակահատվածում փաստացի կատարված ծավալների չափով: Պայմանագրային ժամանակահատվածի ընթացքում սահմանված կարգով իրականացվում է կանխավճարի մարում՝ ելնելով կազմակերպությունների կողմից ներկայացված աշխատանքների ծավալներից:

2.5 Եթե պայմանագիրը կնքվում է ընդհանուր արժեքով, սակայն տվյալ տարում նախատեսված են ավելի քիչ միջոցներ, քան պայմանագրի գինն է, և ծառայությունների մատուցման որոշակի մասը կատարվելու է հաջորդող տարիներին միջոցներ նախատեսվելու դեպքում, հաջորդող տարիներին ծառայությունների մատուցումն իրականացվում է համաձայնագիր կնքելու միջոցով: Այն դեպքում, երբ ծառայությունների մատուցման համար տվյալ տարվան հաջորդող տարում չեն նախատեսվում միջոցներ, ապա այդ մասով պայմանագիրը լուծվում է:

III. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

3.1. Կատարողը պարտավոր է՝

3.1.1. Ծառայությունն իրականացնել ամբողջ ծավալով՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի կողմից հաստատված չափորոշիչներին, մեթոդական ցուցումներին, կարգերին, հրահանգներին և այլ իրավական ակտերին համապատասխան:

3.1.2. սահմանել տրամադրվող Ծառայության կազմակերպման և իրականացման ներքին կարգ, նշանակելով դրա կատարման համար պատասխանատու անձ:

3.1.3. Ծառայություն իրականացնելու վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքների, կառավարության որոշումների, Պատվիրատուի հրամանների, կարգադրությունների, համապատասխան ոլորտին առնչվող այլ նորմատիվ իրավական ակտերի վերաբերյալ, ինչպես նաև սույն պայմանագրի դրույթների մասին տեղյակ պահել բժշկական կազմակերպության աշխատակիցներին:

3.1.4. ապահովել Պատվիրատուի կողմից սահմանված կարգով և հաստատված

ձևերով իրականացվող Ծառայության հաշվառումը, գրանցումը և արժանահավատ հաշվետվությունների ներկայացումը Պատվիրատուին:

3.1.5. սահմանված կարգով իր գործունեության ստուգման ընթացքում ապահովել Պատվիրատուին անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի և այլ տեղեկատվության ներկայացումը:

3.1.6. ապահովել գոյացած ֆինանսական միջոցների արդյունավետ և նպատակային օգտագործումը՝ պահպանելով ծախսերի իրականացման հետևյալ առաջնահերթությունները. աշխատավարձ, հարկային պարտավորություններ, դեղորայքի և բժշկական նշանակության ապրանքների գնում, այլ ծախսեր:

3.1.7. ապահովել օրենքով, այլ իրավական ակտերով սահմանված Ծառայություն ստացող քաղաքացու իրավունքների իրականացումը, սույն պայմանագրի շրջանակներում իրականացվող Ծառայության մասին տեղեկատվության հրապարակայնությունը՝ բնակչության համար տեսանելի վայրում տեղադրելով համապատասխան տեղեկատվություն Ծառայության տրամադրման հետ կապված հարցերի կամ բողոքների ներկայացման կարգի մասին և Պատվիրատուի սահմանած կարգով կազմակերպել բուժանձնակազմի մասնագիտական կրթումը և վերապատրաստումները:

3.1.8. աշխատողների վարձատրությունը, այդ թվում՝ ըստ բուժանձնակազմի տարբեր կատեգորիաների վարձատրման նվազագույն ամսական չափերը, սահմանել ՀՀ առողջապահության նախարարի հրամաններով հաստատված՝ աշխատողների աշխատանքի վարձատրության հաշվարկման և վճարման չափորոշիչներին համապատասխան:

3.1.9. պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող 50% և ավելի պետական մասնակցությամբ առևտրային և պետական ոչ առևտրային կազմակերպությունների դեպքում՝ գնումների պլանները, գնման հայտարարությունները նախքան հրապարակվելը տրամադրել Պատվիրատուին:

3.1.10. հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերությունների համար՝ ապահովել ընկերության տարեկան զարգացման ծրագրով սահմանված ցուցանիշների, այդ թվում՝ շահութաբերության ապահովումը:

3.1.11. Ապահովել վճարովի հիմունքներով և համավճարով մատուցվող ծառայություններից ստացված եկամուտների առնվազն 10 տոկոս աճ՝ 2014 թվականի նույն ցուցանիշի նկատմամբ:

3.1.12. Ապահովել տարեկան համախառն եկամտի նկատմամբ շահութաբերության ցուցանիշի առնվազն 10 տոկոսի աճ՝ 2014 թվականի նույն ցուցանիշի նկատմամբ:

3.1.13. Ապահովել վճարովի ծառայություններից ստացվող եկամուտների լիարժեք մուտքագրումը, հաշվառումը, ծառայությունների մատուցման վայրերում ՀԴՄ-ների առկայությունը և ոչ պաշտոնական վճարումների բացառումը:

3.1.14 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում, դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3.2. Կատարողն իրավունք ունի՝

3.2.1. անհրաժեշտության դեպքում հիմնավորել Պատվիրատուին Ծառայության վերաբերյալ հաշվետվությունների արժանահավատությունը՝ լրացուցիչ փաստաթղթեր ներկայացնելու միջոցով,

3.2.2. մասնակցել Պատվիրատուի կողմից բժշկական կազմակերպությունում կազմակերպվող ստուգումներին, ուսումնասիրություններին և ընթացիկ վերահսկողությանը, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով վիճարկել Պատվիրատուի գործողությունները,

3.2.3. սույն պայմանագրով սահմանված կարգով ստանալ փոխհատուցում պատշաճ կերպով մատուցված ծառայությունների համար:

3.3. Պատվիրատուն պարտավոր է՝

3.3.1. Կատարողին ցուցաբերել անհրաժեշտ կազմակերպամեթոդական օժանդակություն,

3.3.2 Ամփոփել Կատարողի կողմից իրականացված Ծառայության վերաբերյալ ներկայացված հաշվետվությունները և ներկայացնել վճարման,

3.3.3. Սահմանված կարգով ապահովել ֆինանսավորման համար անհրաժեշտ փաստաթղթերի մուտքագրումը և այլ անհրաժեշտ գործողությունների կատարումը՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 15-ը, իսկ դեկտեմբեր ամսվա համար մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը, Կատարողի կողմից սույն պայմանագրի 1.2 կետով սահմանված ժամկետների պահպանման պայմանով,

3.3.4. Պայմանագրային ծավալների ամսական համամասնությունների գերակատարման հետևանքով հաշվետու ժամանակահատվածում չներկայացված հաշվետվությունները ընդունել փոխհատուցման պայմանագրային գումարի շրջանակներում՝ ՀՀ առողջապահության նախարարի կողմից սահմանված կարգով:

3.4. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.4.1. Սույն պայմանագրի համաձայն, ցանկացած պահի, ստուգել Կատարողի կողմից Ծառայության կատարման ընթացքը, ՀՀ առողջապահության նախարարի կողմից հաստատված չափորոշիչներով և Պայմանագրով սահմանված ծավալները, որակը, Կատարողի գործունեությունը բնութագրող տեղեկատվության արժանահավատությունը և ստացված ֆինանսական միջոցների արդյունավետ ու նպատակային օգտագործման ճշտությունը և առողջապահության բնագավառի իրավական ակտերով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջների կատարումը և պահպանումը, սահմանել հայտնաբերված թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ,

3.4.2. առանց Ծառայության արդյունքի դիմաց փոխհատուցելու՝ միակողմանիորեն, ամբողջությամբ կամ մասամբ լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողի կողմից մատուցված ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի պահանջներին,

3.4.3. Կատարողի կողմից սույն պայմանագրի դրույթները և ստանձնած պարտավորությունները երկու կամ ավելի անգամ խախտելու դեպքում հարց բարձրացնել նրա բաժնետոմսերի կառավարման լիազորություն ունեցող մարմնի առջև՝ Կատարողի համապատասխան իրավասու անձի նկատմամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված կարգապահական տույժեր կիրառելու վերաբերյալ և/կամ միակողմանի լուծել պայմանագիրը,

3.4.4. այն դեպքում, երբ «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում մինչև սույն պայմանագրի կնքումը Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ) կամ Կատարողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա, այդ հիմքերը ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել սույն գնման պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև սույն պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային սույն պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Կատարողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն, այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը սույն պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով,

3.4.5. յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող 15 օրվա ընթացքում քննարկել Կատարողի եռամսյակային գործունեության արդյունքները՝ Ծառայության որակը, ՀՀ

առողջապահության նախարարի կողմից հաստատված մեթոդական ցուցումների, կարգերի, հրահանգների և այլ իրավական ակտերի կատարման ընթացքը, «թեժ գծի» միջոցով կամ այլ աղբյուրներից ստացված բողոք-դիմումները, ոչ պաշտոնական վճարումների կատարման հաստատված դեպքերը, և ելնելով քննարկման արդյունքներից՝ և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 780-րդ հոդվածի համաձայն միակողմանիորեն լուծել պայմանագիրը,

3.4.6. պայմանագրով նախատեսված աշխատանքների ստուգման արդյունքներով հայտնաբերված թերությունները վկայակոչելու և դրանց հետ կապված պահանջներ ներկայացնելու՝ աշխատանքն ընդունելուց հետո մինչև երեք տարվա ընթացքում: Սույն կետը կիրառվում է նաև կողմերի միջև մինչև սույն պայմանագրի կնքումը (սկսած 2012 թվականից) ծագած հարաբերությունների նկատմամբ՝ կապված պետության կողմից Ծառայության ձեռքբերման հետ:

3.5. Պատվիրատուն իրավունք ունի չընդունել Կատարողի կողմից հաշվետվություններով ներկայացված աշխատանքները, եթե Կատարողի կողմից Ծառայություն ստացող քաղաքացուն մատուցվել է ամբողջությամբ կամ մասնակիորեն ոչ պատշաճ ծավալի և/կամ որակի ծառայություններ:

3.6. Կողմերն ունեն ՀՀ օրենսդրությամբ և սույն պայմանագրով նախատեսված այլ իրավունքներ և կրում են ՀՀ օրենսդրությամբ և սույն պայմանագրով նախատեսված այլ պարտականություններ:

3.7 Կողմերի համաձայնությամբ Ծառայությունների մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը:

IV. ՎԵՐԱՀՍԿՈՒՄ

4.1. Կատարողի կողմից սույն պայմանագրի շրջանակներում մատուցված կամ մատուցվող ծառայությունների որակի և ծավալի համապատասխանությունը սույն պայմանագրի պահանջներին գնահատվում է Պատվիրատուի կողմից սահմանված կարգով իրականացվող պլանային, ընթացիկ, ինչպես նաև կոնկրետ դեպքերի վերաբերյալ ուսումնասիրությունների և/կամ ստուգումների միջոցով: ՈՒսումնասիրությունները կամ ստուգումները իրականացվում են Պատվիրատուի կողմից կազմված հանձնաժողովի միջոցով, որում կարող են ներգրավվել նաև հրավիրված մասնագետներ,

4.2. Ծառայության որակի և ծավալի վերահսկում իրականացնելիս Պատվիրատուն իրավունք ունի.

4.2.1. Ուսումնասիրել մատուցվող Ծառայության որակի և ծավալի համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի կողմից հաստատված չափորոշիչներին, մեթոդական ցուցումներին, կարգերին, հրահանգներին և սույն պայմանագրով սահմանված ծավալներին:

4.2.2. ստանալ տեղեկատվություն Ծառայության վերաբերյալ, ուսումնասիրել Ծառայության ընթացքի գրառումները, շարժը,

4.2.3 բացատրական աշխատանքներ տանել Ծառայություն ստացող քաղաքացու և նրա հարազատների հետ Ծառայություն ստանալու իրավունքի վերաբերյալ,

4.2.4 ծանոթանալ Ծառայության պայմանագրով նախատեսված կազմակերպության պարտավորությունների կատարման ընթացքին,

4.2.5 անհրաժեշտության դեպքում իրականացնել 50 տոկոս և ավելի պետական մասնակցությամբ առևտրային և պետական ոչ առևտրային կազմակերպությունների կողմից կնքված պայմանագրերի, ինչպես նաև գնման գործընթացների գծով ընտրանքային մշտադիտարկում, պահանջել և ստանալ այդ գործարքներին առնչվող բոլոր

փաստաթղթերը, իրականացնել մոնիտորինգի արդյունքներով բացահայտված խնդիրների շտկման նպատակով գործողություններ:

4.3. Ստուգման և ուսումնասիրության արդյունքները ձևակերպվում են համապատասխան եզրակացությամբ, որի վերաբերյալ Կատարողն իրավունք ունի ներկայացնելու բացատրություններ:

4.4. Կատարողը ստուգումների և ուսումնասիրությունների ընթացքում Պատվիրատուի մասնագետների համար ապահովում է աշխատանքային պայմաններ և օժանդակում է աշխատանքները ժամանակին և լիարժեք կատարելու հարցում:

V. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1. Կատարողի կողմից Պատվիրատուին Ծառայության վերաբերյալ ներկայացված ոչ պատշաճ կամ ոչ արժանահավատ հաշվետվությունները, որոնք բացահայտվում են ստուգումների արդյունքում, պակասեցվում են տվյալ դեպքի համար նախատեսված գումարի չափով՝ սույն պայմանագրի 5.3 կետով սահմանված կարգով: Եթե Պատվիրատուին մատուցած Ծառայության վերաբերյալ ներկայացված հաշվետվություններում հայտնաբերված ոչ պատշաճ կամ ոչ արժանահավատ հաշվետվությունների թիվը կազմում է յուրաքանչյուր ձևին համապատասխան ներկայացված հաշվետվությունների 10 տոկոսը կամ ավելին, ապա պայմանագրի կատարումը համարվում է ոչ պատշաճ: Պայմանագրի կատարումը համարվում է ոչ պատշաճ նաև այն դեպքերում, երբ Կատարողի կողմից հիվանդին մատուցվել է ամբողջությամբ կամ մասնակիորեն ոչ պատշաճ ծավալի և/կամ որակի Ծառայություններ, որոնց մասին Պատվիրատուն Կատարողին սույն պայմանագրի գործողության ընթացքում 2 կամ ավելի անգամ գրավոր տեղեկացրել է:

5.2. Սույն Պայմանագրի 5.1 կետով հայտնաբերված խախտումները, որոնք կատարվել են սույն պայմանագրի գործողության ժամանակահատվածում, Պատվիրատուն պակասեցնում է Կատարողի ընթացիկ տարվա փաստացի աշխատանքների ծավալից, իսկ սույն պայմանագրի գործողության ժամանակահատվածից դուրս խախտումները փոխանցվում են ՀՀ պետական բյուջեի համապատասխան հաշիվներին:

5.3. Պատվիրատուի կողմից հայտնաբերված խախտումների ճշտումը չի ազատում Կատարողին իր պարտավորությունները ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվությունից և խախտումները վերացնելու պարտականությունից:

5.4. Սույն պայմանագրով Կատարողի ստանձնած պարտավորությունների չկատարման, կամ պայմանագրի 5.1 կետով նախատեսված հիմքով պայմանագրի ոչ պատշաճ կատարման համար Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի Հավելված 2-ում նշված պայմանագրային գումարի 0,5%-ի չափով:

5.5. Սույն պայմանագրի 1.1 կետով նախատեսված ծառայությունների մատուցման, ինչպես նաև սույն պայմանագրի 1.2 կետով նախատեսված հաշվետվությունների ներկայացման ժամկետները խախտելու դեպքում Կատարողից ուշացման յուրաքանչյուր օրվա համար գանձվում է տույժ՝ հաշվետու ժամանակահատվածում ներկայացման ենթակա կատարողականի արժեքի 0,05%-ի չափով:

5.6. Սույն պայմանագրի 5.4 և 5.5 կետերով նախատեսված տուգանքները և տույժերը հաշվարկվում և վճարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7. Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 3.3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05%-ի չափով:

5.8. Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.9. Տուգանքի և տույժի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները ամբողջությամբ կատարելուց:

VI. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե եղել է անհաղթահարելի ուժի ազդեցություն, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

VII. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ

7.1. Սույն պայմանագիրը լուծվում է՝

7.1.1. եթե պայմանագրի գործողության ժամկետը լրացել է,

7.1.2. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում,

7.2. Սույն պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել.

7.2.1. Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝

ա. միայն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերում: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը.

բ. պայմանագրով նախատեսված Ծառայության շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերում, որը պետք է ՀՀ կառավարության 04.03.2014թ №318 որոշման 4-րդ կետի 2)-րդ ենթակետի համաձայն հաստատվի ՀՀ առողջապահության նախարարի կողմից՝ համաձայնեցնելով ՀՀ ֆինանսների նախարարի հետ: Շուկայական գների որոշման և դրանց փոփոխության գնահատման կարգը սահմանվում է ՀՀ առողջապահության նախարարի կողմից՝ համաձայնեցնելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի հետ:

7.2.2. Եթե լուծարվել կամ վերակազմակերպվել են պայմանագրի կողմ հանդիսացող կազմակերպությունները.

7.2.3 եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը՝ տվյալ ժամանակահատվածի դրությամբ Պատվիրատուի կողմից ընդունված Ծառայության ծավալները փոխհատուցելու պայմանով: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե.

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն Պայմանագրի 3.4.5 և 5.1 կետերով սահմանված դեպքերում,

բ) խախտվել են Ծառայության մատուցման ժամկետները:

VIII. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

8.1. Սույն պայմանագրի հավելվածներում համապատասխան փոփոխություններ կատարելու դեպքում՝

8.1.1. Ծառայության տեսակների ավելացումը կամ պակասեցումը ուժի մեջ է մտնում Պատվիրատուի կողմից դրանց հաստատման պահից:

8.1.2. սույն պայմանագրի մասնակի դադարեցման և/կամ լուծման դեպքում տվյալ պահին բուժումը դեռ չավարտած պացիենտների բուժման հետագա փոխհատուցումը իրականացնելու նպատակով, Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում պակասեցման ենթակա Ծառայության մասով բուժումը շարունակող պացիենտների ցանկը և հիվանդության հաշվետվությունների համարները:

8.2. Սույն պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում վեճերը լուծվում են Կողմերի բանակցությունների միջոցով, իսկ համաձայնության չգալու դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

8.3. Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ գրավոր համաձայնագիր կնքելու միջոցով, որը հանդիսանում է սույն պայմանագրի անբաժանելի մասը:

8.4. Սույն պայմանագիրը միակողմանի լուծելու դեպքում, Կողմերը պարտավոր են միմյանց գրավոր տեղեկացնել այդ մասին առնվազն 15 օր առաջ:

8.5. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև 31.12.2015 թվականը: Սույն պայմանագրի պայմանները կիրառվում են կողմերի միջև 16.12.2014թ.-ից մինչև 15.12.2015 թվականը ծագած հարաբերությունների նկատմամբ, բացառությամբ Պայմանագրի 3.4.6 կետի: Սույն պայմանագրի շրջանակներում ծառայությունների մատուցման ժամկետ է սահմանվում մինչև 15.12.2015 թվականը:

8.6 Սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում չեն կարող կատարվել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայությունների ծավալների կամ, ձեռք բերվող գնման առարկաների միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման: Արհեստական են համարվում հետևյալ փոփոխությունները՝

8.6.1. պայմանագրի գնի անփոփոխ մնալու պայմանով՝ պայմանագրով նախատեսված ծառայությունների ծավալների նվազեցումը կամ պայմանագրի գնի նվազեցման պայմանով՝ պայմանագրով նախատեսված ծառայությունների ծավալների ոչ համամասնորեն նվազեցումը, որի արդյունքում ավելանում է գնման առարկայի միավորի ձեռքբերման գինը.

8.6.2. պայմանագրով նախատեսված ծառայությունների փոխարինումն այլ բնութագրեր ունեցող ծառայություններով, որոնք միասին գումարային արտահայտությամբ գերազանցում են պայմանագրի գնի տասնհինգ տոկոսը: Պայմանագրի գնի տասնհինգ տոկոսի շրջանակում փոխարինումը կարող է կատարվել, եթե առկա է մասնագիտական եզրակացություն այն մասին, որ փոխարինումը հանգեցնում է պայմանագրի արդյունավետ իրականացմանը: Փոխարինումը համարվում է արդյունավետ, եթե դրա հետևանքով պայմանագրով նախապես սահմանված ոչ ֆինանսական արդյունքներն ստացվում են համեմատաբար քիչ ֆինանսական միջոցների ծախսմամբ.

8.6.3. պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման ժամկետը՝

ա. մինչև լրանալը ցանկացած ժամկետով մեկ անգամից ավելի ժամկետով երկարաձգումը,

բ. լրանալուց հետո ցանկացած ժամկետով երկարաձգումը.

8.6.4. պայմանագրով նախատեսված ծառայությունների տեխնիկական բնութագրերի անփոփոխ մնալու պայմաններում պայմանագրի գնի ավելացումը:

8.7 Պայմանագրով նախատեսված ծառայությունների ծավալները կարող են ավելանալ միայն պայմանագրի կատարման ժամկետում:

8.8. Սույն պայմանագրից ծագած Կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդեմ պարտավորության հաշվանցով, առանց Կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի առանց պարտապան Կողմի (ՀՀ Ֆինանսների նախարարության) գրավոր համաձայնության:

8.9. Սույն պայմանագիրը և նրան կից հավելվածները կազմված են հավասար իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից, որոնցից մեկը գտնվում է Պատվիրատուի, մյուսը՝ Կատարողի մոտ:

IX. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պատվիրատու՝ ՀՀ Առողջապահության նախարարություն	Կատարող՝«Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ
Հասցե՝ Երևան, Կառավարական տուն 3	Հասցե՝ ք.Երևան, Արեշ 35
Սպասարկող բանկ՝ ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	Սպասարկող բանկ՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ
Բանկային հաշիվ՝ 900011105138	Բանկային հաշիվ՝ 1570003396950100
ՀՎՀՀ 02507171	ՀՎՀՀ 02508003
ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի ղեկավար՝ Արմեն Կարապետյան	Տնօրեն՝ Վարդան Դավեյան
---------- (ստորագրություն)	(ստորագրություն)
,, 201 թ	,, 201 թ.
Հեռ.564121 Ֆաքս E-mail: info@moh.am	Հեռ. 470621 Ֆաքս E-mail:

Հավելված 1
---------- 20 թ.
N գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

2015 թվականի Մարդասիրական օգնության կարգով ստացվող դեղերի և դեղագործական արտադրանքի ստացման, մաքսազերծման և բաշխման ծառայությունների

N	Ամիսը	Գումարը (հազ. դրամ)
1	Հունվար	
2	Փետրվար	4.978,6
3	Մարտ	4.978,7
4	Ապրիլ	4.779,5
5	Մայիս	4.779,5
6	Հունիս	4.779,6
7	Հուլիս	5.436,6
8	Օգոստոս	5.436,6
9	Սեպտեմբեր	5.436,7
10	Հոկտեմբեր	6.379,2
11	Նոյեմբեր	6.379,3
12	Դեկտեմբեր	6.379,3
Ընդամենը		**59.743,6**

ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պատվիրատու՝ ՀՀ Առողջապահության նախարարություն

Հասցե՝ Երևան, Կառավարական տուն 3

Սպասարկող բանկ՝ ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն

Բանկային հաշիվ՝ 900011105138

ՀՎՀՀ 02507171

ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի ղեկավար՝

Արմեն Կարապետյան

(ստորագրություն)

" " 201 թ

Հեռ:564121

Ֆաքս

E-mail: info@moh.am

Կատարող՝«Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ

Հասցե՝ ք.Երևան, Արեշ 35

Սպասարկող բանկ՝ Կոմերցբանկ ՓԲԸ

Բանկային հաշիվ՝ 1570003396930100

ՀՎՀՀ 02[illegible]

Տնօրեն՝ [illegible]

(ստորագրություն)

" " 201[illegible] թ

Հեռ:[illegible]

Ֆաքս

E-mail: anmohk@mail.ru

Հավելված 2

ՀՀ ԱՆ ՖԲ-ԾՁԲ-Պայմանագրի

ՀԱՇՎԱՐԿ

2015 թվականի Մարդասիրական օգնության կարգով ստացվող դեղերի և դեղագործական արտադրանքի ստացման, մաքսազերծման և բաշխման ծառայությունների

ծավալների

«Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ

հազար դրամ

Բաժին, խումբ, դաս, ծրագիր	Բժշկական օգնության և սպասարկման ծրագրի անվանումը	Չափման միավորը	Թվաքանակ	2015 թվականի տարեկան ծավալը	
				Հաշվարկային գումար	Պայմանագրային գումար
				1	2
07 06 01 10	Մարդասիրական օգնության կարգով ստացվող դեղերի և դեղագործական արտադրանքի ստացման, մաքսազերծման և բաշխման ծառայություններ	ամիս	12	59.743,6	59.743,6

Ծանոթություն*

ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պատվիրատու՝ ՀՀ Առողջապահության նախարարություն

Հասցե՝ Երևան, Կառավարական տուն 3

Սպասարկող բանկ՝ ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն

Բանկային հաշիվ՝ 900011105138

ՀՎՀՀ 02507171

ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի ղեկավար՝

Արսեն Կարապետյան

(ստորագրություն)

„ „ 201 թ

Հեռ. 564121

Ֆաքս

E-mail: info@moh.am

Կատարող՝«Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ

Հասցե՝ ք.Երևան, Արեշ 35

Սպասարկող բանկ՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ

Բանկային հաշիվ՝ 1570003396950100

ՀՎՀՀ 02508003

Տնօրեն՝ Մարինե Գասպարյան

(ստորագրություն)

„ „ 201 թ.

Հեռ. 470621

Ֆաքս

E-mail: anmohk@mail.ru

Ա. Գրիգորյան